

ՄԱՍԿ

Տարեկան գինը 10 ռուբլ, կես տարվանը 6 ռուբլ:

Թիֆլիսում գրվում են միմյանի խմբագրատան մէջ:

Օտարաբաղադրացիք դիմում են ուղղակի

Тифлис, Редакция „Маск“

Խմբագրատունը բաց է առևտրական 10—2 ժամ

(Բացի կիրակի և տոն օրերից):

Յայտարարութիւնները ընդունվում են ա մեն լեզուով

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր բառին 2 կոպէկ:

ԲՈՎԱՆԻԱԳՈՒԹԻՒՆ

Նոր շինվող թատրոնական դահլիճը—նոր քերտեղի տեսքով—կորած չէ դեռ: Նամակ խաղովից, Նամակ Բագովից, Նամակ Զալա-Օղլուից, Ներքին լուրերի—Արտաքին տեսակ-թիւն: Ֆրանսիայ—Մշակիչ հեռագիրներ—Յայտարարութիւններ—Տեղեկացոյց—Բանա-սիրական կերպարանափոխութիւն:

ՆՈՐ ՇԻՆՎՈՂ ԹԱԹՐՈՆԱԿԱՆ ԴԱՀԼԻՃ

Թիֆլիսի Դիւրօգտայա փողոցի վրա գտնվող Երթուղու գալէ-րեում, ինչպէս յայտնի է ընթեր-ցողին, շինվելու է մի թատրոնա-կան դահլիճ, որի պլանը արդէն հաստատված է քաղաքային ուպ-րովայից:

Դահլիճը կունենայ տաս արշին լայնութեան և տաս արշինից ա-ւել խորութեան բեմ, կունենայ տաս և երկու լծա, եօթ կարգ բազկաթոռներ, տաս և մէկ կարգ աթոռներ և հարիւր մարդու հա-մար գալերէա:

Դահլիճի տեսքը կը լինի հա-սարակ և գեղեցիկ՝ սպիտակ ներկ-ված՝ հասարակ ոսկեգոծ դարդե-րով (բորդիւրներով), լծաները կունենան կարմիր մանուշակա-փերը և բեմի վարագոյրն էլ կար-միր գոյնի կը լինի:

Նոր թատրոնը կը տեղադրի իր մէջ 400 հանդիսականներից

աւել և մի գիշերվայ ընդհանուր արդիւնքը հասարակ գներով կը լինի մօտ 500 ռուբլ:

Վերջին ժամանակները մի մեծ պահանջ էր դրացվում Թիֆլի-սում թատրոնական և կոնցերտա-կան դահլիճի: Մեր կուրսների դահլիճները մի կողմից անյար-մար են թէ կոնցերտների և թէ սիրողների ներկայացումների հա-մար, իսկ միւս կողմից շատ դը-ժուարութեամբ վարձով էին տըր-վում ցանկացողներին:

Եւ չէնք ետևում մեր միակ թատրոնի վրա, որ մեծ թատրոնի պրովելուց յետոյ, միշտ բռնված է ռուսաց թատրոնական խմբի ներ-կայացումներով, գրեթէ երբեք ազատ չէ լինում, կամ եթէ տըր-վում է տեղական սիրողներին ու եկած արտիստներին, այնպիսի գներով է տրվում, որոնք ամենքի համար մատչելի չեն:

Եւ պատճառով նոր շինվող թատրոնական դահլիճը կարող է բաւական մեծ գործ կատարել: Նա կը դառնայ ապաստան մեր բոլոր տեղական թէ բեմական ներկայացումների, թէ կոնցերտնե-րի, միջոց կը տայ մեր քաղաքը եկող օտարաբաղադրացի գանազան արտիստներին վարձել մի յարմար թատրոնական դահլիճ էժան գը-նով:

Մենք լսում ենք որ վրաց թատրոնական սիրողների մշտա-կան խումբը արդէն կազմակերպ-վում է:

Ցանկալի կը լինէր որ և հա-յերից կազմվէր սիրողների այդ տեսակ թատրոնական մշտական խումբ, կամ թատրոնական ընկե-րութիւն, հիմնական դրամագլ-խով:

Թատրոնական դահլիճը երեւի պատրաստ կը լինի երեք ամսից յետոյ:

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԿՈՐԱՅ ԶԵ ԴԵՌ ԱԼԵԿՍԱՆԴՐՈՎԻ ԴՊՐՈՑ. ՆԵՐԻ ՄԵԾԱԳՈՒՄԱՐ ԵԿԱՄՈՒՏԸ:

Մշակութիւնը եղբրում վերջին ժամանակ մի երկու պոլիմիքական թղթակցութիւնք երևացին Ալեքսանդրապոլից, որոնց մէջ ի շարս այլոց, այնտեղի երկուս զարդացոց նո-րաշէն կրպակների վերաբերմամբ զանազան կարծիքներ յայտնված էին:

Թղթակցներից մէկը (Ատովմ) գրում է թէ՝ հոգաբարձուց և կրպակապանայ շնոր-հիւ կրպակները շատ էժան վարձու տրվելով, ուսումնարանների բաւական մեծ գումար իբրեւ թէ՛ կօրէկ է Միւսը (Ղաապեանց) հաստատելով կորուստը, իբրեւ կատարված վերջացած գործ, արդարացում է այդ կո-րուստը ասելով՝ «կրպակապանայ բաղդայդ-պէս բերեց»:

Բարեպատեհ տաթ ռուսերով Ալեքսանդ-րապոլում անձամբ կրպակաց գործին ծանո-

թանալու, և այն ոչ գրեթէ ի զուրս բաժա-սանաց, այլ իսկ պաշտօնական գօ և մե նե-ն երի հիման վրա—որովհետեւ պաշտօնական կրպակ ինձ յանձնվեցաւ գործ, քննելու և տեղեկագիր ու եղբակացութիւնք կազմելու, պարտք եմ համարում այսօր հրապարակաւ յայտնելու որ յիշեալ թղթակցներից երկուսն էլ բաղդաւորապէս սխալված են:

—Ուսումնարանաց արդիւնքը կօրած չէ: Ահա ինչ գրութեան է գործը:

—Նախ՝ Ալեքսանդրապոլու հասարակու-թիւնը այժմ պարզ սկսել է հասկանալ, որ կրպակաց գործը Պարզեանցի կամ Տէր-Յովսէփեանցի գործ չէ, այլ քաղաքի մատաղ սերնդի, հասարակաց և չբաւորաց որդոց ապօրինի կերպով զրկվելու կամ չը զրկվելու խնդիրն է:

Երկրորդ՝ քաղաքի բոլոր մասնող և հաս-կացող անձինք համաձայն են կրպակաց վե-րաբերութեամբ հետեւեալ կետերում:

Թէ՛ իրաւի պատերազմական տարիներում, սկսած 1876 թւի վերջի ամիսներից կրպակ-ներին անհամեմատ էժան գնով վարձ տրված է, և ուսումնարանները լիակատար զրկուած են: Թէ՛ն այդ բանը հիմնված է կրպակապանաց հոգաբարձութեան ճանդամոց *) հետ կապած պայմանի վրա, սակայն՝ ամեն փոքր ի շա-տե հասկացողը յայտնի է, որ այդ պայմանը ոչինչ նշանակութիւն չունի, որովհետեւ նա հաստատված չէ ոչ մարմնաւոր և ոչ հոգեւոր իշխանութիւնից: վերջինս իբրեւ իրաւաւոր իր ժամանակին (1877 թ) բողոքել է և պաշտօ-նապէս այդ պայմանի դէմ՝ բացատրել, որ ոչ հոգաբարձուք և ոչ կրպակապանք իրաւունք չունենին այդ կայքի վերաբերութեամբ պայ-մաններ կապելու, առանց իր իշխանու-թեանը. քանի որ ինքը դեռ պաշտօնապէս չը գիտէր այդ եւր նոր կայքի գոյութիւնը և ոչ գորա շինութեան հաշիւները մինչ ցարդ

*) Նախագահին էլ հայտնելով իբրեւ անգամ միայն հոգաբարձութեան, որովհետեւ հոգեւոր տա-նի միւս անդամները ամենին տեղեկակցում մաս-նակից չեն եղել այդ պայմանին:

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԿԵՐԱՊԱՆԱՓՈՒՈՒԹԻՒՆ

(Բարեկամական նուէր Միլիաս Պալապանեանին)

Տնական գործերու պատճառաւ ստիպված էի ուղիղ ուղին ամիս բացակայ լինելու Նախի-ջևանէն, և երբ որ այդ ժամանակվայ և կամա-ւոր աքսորանքս վերադառաւ և ես վերադարձայ մայրենի քաղաքս իմ զարմանքը և հիացումը ոչ չափ ունէր, ոչ սահման: Երբ որ երկաթուղու կայարանէն (որ քաղաքէն կէս վերստ հեռի է) մտայ քաղաք՝ միանգամայն չը ճանաչեցի մեր էր երբեմն «գեղեցիկ Նախիջևան, տուն հայոց և բնակարան»-ը և վերջին ժամանակվայ լիողի... զի և թօզի՝ ապաստարանը—ցայն աստիճան կերպարանափոխված էր նա: Տունս հասնելու համար ծայրէ ծայր գրեթէ բոլոր քաղաքը պիտի անցնէի. ամեն մի քաղաքի միջով նորանոր փո-փոխութիւններ հանդիսանում էին աչքիս. առա-ջուց ցիտա, կեղտոտ, անհարթ, գարշառու փո-ղոցները ամենագեղեցիկ կերպով քարայտակած էին՝ չէթէն մինչի ետին. տներու առջևը

հինգ կանգնաչափ տեղհարթ՝ ու մարդու մա-թեր էին և սիւնակներու տեղը միմիայն 5—6 քայլափոխ հեռաւորութեամբ սաղարթախա, և կանանչափայլ ծառեր ու փայլուն լապտերներ շարած. փողոցների մէջ և մանաւանդ չուկայուն ոչ մի չուն, ոչ մի ոտքը բռնկի, չէր լսու բաց, քար ձգող (կամ ու կրակ) տղայ, ոչ մի սառ-կած հաւ, կատու ու սիւնավու, ոչ մի սպ-լաղուռի տակէն մեր մաքրասէր խաթունէան-կաներու ձեռքով վախճած լուացքի միայնա-չանայի քիթ պատուող հոտով ջուրը. չը տեսայ առաջվայ բաց-ազգայնները, քարուքանդ ու կի-տաքանդ տները, ծուռված պատերը ու սալա-ղուռերը. ամեն բան կամ նոր ի նորայ էր չի-նած, կամ նորոգած և կամ կարկատած, Համա-րեա ամեն թաղի մէջ, տներու ճակատին ոսկի տառերով գրած խորհրդում էի «մանկական պար-տէզ», «տղայոց արուեստական դպրոց», «աղ-ջկանց արուեստական դպրոց», «հի-ւանդանոց», «ծերոց և պառաւանց անկիւնանոց», «մատենադարան», «տղարան», «ընկերութիւն թատերասիրաց և երաժշտասիրաց», և այլն և այլն. քանի յառաջ էի գնում դէպի տունս այնքան առաւել սաստկանում էր զար-մանքս: Կարծում էի կամ սխալմամբ մի օտար քաղաք մտել եմ, կամ Նախիջևանը կախարդվել է, աչքիս չէի հաւատում: Չը գիմացայ ու հար-ցուցի կառապանին. «Աս Նախիջևանը չէ որ».— Հապա ինչ է, հէպէթ Նախիջևանն է. ասաց նա, որ միամտեցայ. բայց զարմանքս չը պա-

կասեցաւ: Եւ յիշեալով զարմանալու բան էր այսպիսի մեծ փոփոխութիւնը այսպիսի կարճ ժամանակվայ մէջ:

Միթէ, մտածում էի, այս հարիւր տարի յետ ընկած, կիսաքանդ, աղքատացած քաղաքը կա-րողացաւ ու թշնամվայ մէջ ցայդ-աստիճան կեր-պարանափոխվել: Արդեօք ինչ հրաշք պատա-հել է սորա մէջը. արդեօք Թաղաւորի սաս-տկապահանջ հրամանով կատարվել է այս ա-մեն բարենորոգութիւնը, թէ մէկ նորոնսի խե-ւօք և գործունեայ քաղաքագլուխ յառաջացուցել է այս, թէ քաղաքի մէջ մէկ ոսկէհանք է գտնվել, թէ հայերը գաղթել են և նոցա տեղ-անդիւնացիք կամ հօլանդացիք իրենց բնակու-թիւնը հաստատել են... բայց չէ. հայութեան գոյնը և հոտը երևում է մէջը. բնակիչը օտա-րազգիներ չեն, այլ մեր ուղղափառ հայերն էին, երեսներէն յայտնի էր, շատերին ճանաչում էի: Եւ Չէ, չէ, ասում էի մտքիս մէջ, թէ և քաղա-քացին նոյնն է, բայց հնար չը կայ, որ քաղաքի մէջ մէկ հրաշք պատահած չը լինի. բայց ինչ չը գիտէի:

Այս մտածմունքի մէջ էի, որ մտայ տունս: Սովորական բարե-Աստու բարեին յետ իսկոյն հանեցի վրայիս ճամփու հալաները, հազալ մա-քուրները և մտայ փողոց. հետաքրքրութիւնս վերջին աստիճանի լարած էր: Երբ որ փողոց մտայ, աչքերս աջ ու ձախ դարձուցի՝ կր տես-նեմ արդեօք մի ծանօթ մարդ, որ մեկնէր ինձ այս հրաշքի պատճառը: Մին էլ տեսնեմ, հե-

ռուից դէպի ինձ գալիս էր Խ. Չ. բարեկամս, որ երեկ տեսել է կառքով անցնելս և շտապել է բարեմաղթելու: ողջութեամբ վերադառնալու: Այս քաղաքափոխութիւնը նորանէն սպասել կա-րելի էր:

Երկու խօսքով մեկնեմ այս երկրապարտի որ-պիսութիւնը: Խ. Չ. զաւակ է մի տնայի, բայց ազնուա-հոգի ծնողաց *): Սորա մանկութիւնը անցել է մեր փողոցների ապականիչ աղբեղութիւնէն հե-ռի: Բաղդի բեմամբ, ուսումնառութեան պատ-ճառաւ նա գնացել է մի հեռաւոր տեղ և այն-տեղէն վերադարձած ընկել է մի շատ պատուա-ւոր վաճառականի խանութ ու մնացել է, եթէ չեմ սխալվում, մօտ տասը տարի: Այս ճանաչումս եմ այդ վաճառականին և հրապարակաւ կը յայ-տնեմ ամենի առաջ, որ նորա խանութի մէջ զարգացած տղայը առհասարակ բարի և ազնիւ ուղղութիւն են ստանում: Ինչ և իցէ: Երկուս-սարդ Խ. Չ. մի հիմնալի բնաւորութեան տէր է. ամենայն ինչ բարի խօսք և գործ նորա աւը-տի մէջ արձագանք գտնում է: Գաղափար մէջ Խ. Չ. էն շատ հարուստները, շատ գիտունները, առ իսկըները, կան, բայց հազիւ թէ սորա-յի

*) Շատ նկատելի երևոյթ է, որ Նախիջևանի մէջ օրինաւոր մարդիկ (օրինաւոր ասեմով) հարուստ չեն հասկանում, այլ ազնուաբարոյ՝ բո-ւմեթի մասին տնայի (ինկաճ) գերդաստան են յառաջացած: Ի հարկէ, այդ օրինակ առանց բացատրութեան:

Թիւնը՝ մեղանշած չենք լինի, եթէ համեմատենք սրան այն առաջադիմական սարին, որը արարած աշխարհի գլխին հաւաքած, երկար ցաւելից յետոյ ծնեց մի չնչին մուկն: Ում ձեռքում են գտնվում նրան պատկանեալ թղթերը, ովքեր են քարտուղարը և նախագահի փոխանորդը կամ օգնականը, ինչպէս չեն իրանց գործունէութեան մասին գտնէ մի համառօտ հաշիւ տալիս լրագիրներով: Եւ հաւաքարկով պահանջում ենք, էլ ինչ անենք: Երանի թէ մեր առաջնորդները գտնէ այնքան հեռատես լինէին, որ չը սկսէին այնպիսի գործ, որը չարունակելու և զրուխ տանելու չնոր՝ չունին, այն ժամանակ գուցէ ժողովուրդի միջին և ստորին դասից գործունէները առաջ կը գտնէ իրանց կարողութեան չափով կը հոգան կարիքը:

Արարատեան ընկերութեան համար ևս մայր-սումը ստորագրութիւն բացվեց այստեղ, բայց այժմ ձայն—ձուռն չը կայ ամենեկին: չը գիտենք որքան է ժողովված և ինչպէս չեն աշխատում չարունակել սկսածը, որպէս զի մի արժանաւոր գաղտնի կազմով: Ես գիտեմ, որ հասարակութիւնը պատրաստ է ուրախ սրտով և առատ ձեռքով մասնակցելու այս բարենպաստ գործին: Ո՛ր և ինչ գրութեան մէջ է այս հայւլը ևս՝ խնդրում ենք, որ բարեհաճեն հրապարակով յայտնել: Բազումի վայել էր այս մասին առաջնակարգ տեղ բռնել: Ուստի ցանկալի է, որ ծանուցութիւնը մէկի վրա չը թողնուի մի քանի հոգիք առաջ գային և միաբան աշխատութեամբ գործէին որը անշուշտ աւելի արդիւնաւոր կը լինի:

Պատերազմի շարունակութեան միջոցում և նրանից յետոյ երբ Հայաստանում պատահած մի հարստահարութեան կամ սպանութեան լուր էր տարածվում՝ այստեղացիք ամեն անգամ տաքանում, բարկանում էին օտարների դէմ և վերջը զայրացած ասում. «Այս հայերը ինչպէս են այն բռնութիւնները տանում, ինչպէս չեն ընդդիմանում և իրանք էլ նրանց կոտորում: Այն, զէթ-թոնցիք, զէթոնցիք, հայ նրանք են է, քանի, ազատասէր, տեսնես ինչպէս նրանց մասին ձայն չը կայ: Եթէ նրանք կանգնեն՝ օգնութեան դրնացողներ շատ կը լինին այստեղից, ամենքս էլ կօգնենք առատօրէն, չենք խնայի...» Դիւրահաւատ լսողը հիանում էր այս նիսի ա խօսքերից: Վերջապէս զէթոնցիքն ևս կանգնեց և իր սրբազան լեռներում անհաւասար բռնակալի դէմ առաքինաւորով, սպառնաց իր զօրութիւնը, արտաքին ձեռնառութեան կարօտացաւ: «Վը-չակի» մէջ կարողացին ս. Խորեն Նար-բէյի և այլոց հրաւերները: Այժմ որ բանը նա զգիւն է հասել՝ ասա իսկի մի խօսող կամ մտածող կայ զէթոնցու համար: ամենեկին: Ստորին և միջակ դասի մարդկանց հետ յաճախ եմ խօսում զէթոնցուց մասին: Նրանք շատ անգամ ասում են. «Գէ մենք ինքնակալութիւն ինչ անող ենք: Ինչ-խաններ կան, նրանք պէտք է առաջ ընկնեն, որ մենք էլ ետեւերից գնանք: Թէ որ հայ ազգը ներգութեան մէջ է միթէ հոգեւոր տէրը չէ իմանում: Նա որ կօնդակ ուղարկէ և յորդորէ բաս մի նոցա անում է, տէրութիւններին խնդրում է հայերի համար...» Ուրեմն ժողովուրդը պատրաստ է, բայց դարձեալ առաջնորդներ է ուղղում, առանց նրանց տեղից չէր կամենում շարժվել: Ամօթ մեր անզգայ վատութեանը, այս էլ մեզ յարմար դէպք, ընդարձակ ասպարէզ, դէ իրօք ցոյց տանք մեր եղբայրներութիւնն է: Խռոված երեխայի պէս էլ միմիայն հեռու կենտրոն ինչ կը դառնայ, սորա թիկուն դարձեալ մեն չենք խմելու: Եւ միթէ դեռ ժամանակ չէ, որ ամեն տեղերում սկսեն շուտով նուէրներ հաւաքել առատութեամբ, ու բացի նրանից հայ հասարակութիւնները պատգամաւորներ ուղարկեն ս. Աթոռը Վնահափառին խնդրելու, որ նա վերջապէս հանդէս գայ և իր բոլոր ջանքը և ազդեցութիւնը գործ դնէ ազգի ճգնաժամից փրկելու: Գուցէ ամեն տեղերից մեռեալ թղթեր շատ են գնում, բայց դեռ Վնահափառին չը հասած քաւարանի տանջանքին են մատնվում: Ինչպէս չը պէտք է կենդանի պատգամաւորներ գը-նան և ազգի կամքը և զգացմունքը պարզապէս յայտնեն: Պատգամաւորութիւն ասացի, միտս կալաւ, որ վնահափառը դժուարամտելի է այնքաններին, որովհետեւ նրանք, որքան էլ կարեւոր գործերով գնացած լինեն, շատ անգամ ստիպվում են, Վնահափառի հիւանդութեան պատճառով, 7-8 կամ աւելի օրերով սպասել և ապա ընդունվել կամ ոչ: Այս էլ երեւի մեր քոռ բազմիցն է: Ուրիշ ազգերի պետերը և բազմաթիւ ծեր ու տղար մեծամեծները առոյգացան, քաջացան և իրանց երկրի շահերը պաշտպանե-

ցին, իսկ մեր մի հատ մեծը ամենայն Հայոց կաթողիկոսը այս նեղ ժամանակում միշտ հիւանդ է ու հիւանդ...:

Դարձեալ ամօթ մեզ, ինչ կը լինի. որ հայ ժողովուրդը միաբանութեամբ մտածէ և հնարներ գտնէ իր Հոգեւոր Տիրոջ հիւանդութեան պատճառը միանգամից ոչնչացնելու, որ այնուհետև նա առողջ և ազատ գոյով կարողանայ ամենքին ամէն ժամանակ ընդունել և ազգային կարօտութիւնները հոգալ: Պատգամաւորութեան միտքը ինձանից չեմ ասում, հասարակ ժողովուրդի կարծիքն է. սրանց բերանից շատ անգամ լսած եմ. «Մենք հոգով կը ցանկայինք պատգամաւոր գնալ ս. Ելմիածին և հասարակութեան կամքը յայտնել, բայց մեզ ոչ այստեղ կընտրեն և ոչ էլ այնտեղ կընտրեն, ուրեմն ինչ-խաններից պէտք է գնան. նրանք էլ թէ որ չեն ուղղում իրանց գործը թողնել մենք պատրաստ ենք ճանապարհածախքը մեզ վրա առնել և վարձատրել նրանց կորցնելու ժամանակի համար, միայն թէ գնան և բան չինեն...» Այս վերջին պայմանը վատ չէ. յուսանք, որ մեր հարուստները ընդունեն նրան և պատգամաւորութիւնը շուտով զրուխ բերեն: Մենք չենք պահանջում, որ ամեն ծանրութիւն և պատասխանատուութիւն առաջաւորների վրա լինեն, այն անիրաւութիւն և անխելութիւն կը լինէր: միայն ցանկանում ենք, որ նրանք իրանց նիւթակաւ և բարոյական ոյժը դէպի բարին գործածեն, ձեռնարկեն, սկսեն և առաջընթաց լինեն ոչ թէ խօսքով՝ այլ գործով: որից խրախուսված բազմութիւնը կը հետեւէ իրանց և մեծամեծ զոհողութիւններ յանձն կառնէ հասարակաց բարիքի համար:

Անցեալ տարիները այստեղ սովորական էր հայերէն ներկայացումներ տալ, որի մասին իմ ակաւն ուսումնարանի աշակերտներն էին առաւելագոյն հոգում: մի քանի խմբակներէ բաժանված, թէ և կային ուրիշներն ևս: Այժմ բնակարաններին խիստ արգելված է *) սարքել կամ մասնակցել ներկայացումներին, իսկ ուրիշ յայտնի թատրոնաւորներ դեռ չը կան: Ուղիղ է, մի քանի շաբաթներ կը լինի, որ ոմանք ժողովվում և խօսում են այս մասին, բայց փոքր ի շատէ հմուտ առաջնորդ չունենալով, չեն կարծում թէ կարողանան հաստատուն խումբ կազմել և բան առաջացնել: որոշած ժամին ամենքը չեն գնում, ներկայացնելու համար նիւթեր չեն ձորում և երբեմն էլ եղածները անյարմար են համարվում, մասնակցող կանայք չը կան, և այլն: «Մշակի» մի թղթակիցը խորհուրդ է տալիս «Մարդ. ընկերութեան» 6000 ռուբ. ծախսելով՝ թատրոնական դահլիճ չինել: Եւ մերոնք որքան հեռաւոր են, որ ամեն բան հիմնաւոր են ըսկ-սում, օրինակ՝ դպրոցի, եկեղեցու և թատրոնի համար հոգալիս նախ չենք են կանգնեցնում իսկ վարժապետներ, դասաւորներ, քարոզիչ—քահանաներ, դերասաններ և ներկայացնելու նիւթեր ինքնին առաջ կը գտնեն: Իմ դատողութեամբ գործողներ որ լինին՝ եղածից ևս կարող են օգտվել: «Մ. ընկ.» այժման դահլիճը բաւական յարմարացրած է և կարող է մեզ ևս պիտանի լինել ինչպէս լինում է արդէն ռուս թատրոնասէրներին:

կասպկացի

ՆԱՄԱԿ ԶԱՆԱՆ-ՕԳԼՈՒՑ

10 նոյեմբերի

Սանահին վանքի դպրոցը, որ շատ ժամանակ է ի վեր այն վանքի միաբան արիւնջան Մարտիրոս վարդապետ Մթէժեանի հոգաբարձութեամբ շարունակվում էր և այս վերջին տարին վարդան եպիսկոպոսին այն տեղից վանահայրութեան պաշտօնէն արձակելէն և նրա տեղ վարդապետ վարդապետին վանահայր նշանակելէն յետոյ առաւել գեղեցիկ կարգի տակ էր ընկած և աշակերտաց թիւը շատ բազմացած էր, այս օրերս բոլորովին խախտվեցաւ, վասն զի վարդան սըրբազանը, որին վարդապետ հետէ բարձր հրամանով արգելված էր վերելու որ և իցէ պաշտօն և Վնահափառի հրամանով միայն Սանահին վանքի մէջ նշանակված էր վանահայր և անցեալ տարի զանազան անկարգութեանց պատճառներով վանահայրութեան պաշտօնէն արձակվելով և

*) Մի կողմից այս արգելքը շատ իրաւացի և օգտակար է, որովհետեւ աշակերտները ուսման համար որոշած շատ ժամեր էին կորցնում ներկայացումները գլուխ բերելու: քայքայ դորանից, շատերը ոչ թէ թատրոնի գաղափարով ոգևորված, այլ շահասիրական նպատակով էին գործում, որի պատճառով ոմանք դասալիք եղան և կամ տարիներով նստեցին մի դասարանում:

այդ տեղից հեռանալով պատճառ էր դարձած դպրոցի յառաջադիմութեանը և միաբանաց խաղաղութեանը, այս օրերս ուղևորեցաւ դէպի ս. Ելմիածին և մի քանի օրէն կրկին վերադարձաւ նոյն վանքը վանահայրութեան պաշտօնի վնահափառի կոնդակով և առանձին հրահանգներով: Բոլոր միաբան վարդապետները վարդան սրբազանի երեսիցը ցրվեցան զանազան կողմերի վրա: Նրանց հետ ցրվեցան բոլոր աշակերտները և ռուսաց լեզուի վարժապետը: վարդան սրբազանը այդ մասին շատ ուրախ է, որ իբրեւ քաջ կարողացաւ բոլորին յաղթել և վանքը առնուլ իր ձեռքը: դպրոցի խախտվելը առաւել ձեռնադուլէրան, որովհետեւ նա շատ սիրում է միայնութիւն... Մտաւայ ասել, որ վարդան սրբազանը բերած էր իր հետ Ելմիածնից հրաման ձեռնադրել Հօբարձի գիւղի վրա իր փեսայ դպր. Մօսէս Միկոյանցին և ի վերահարձին գնալով այն գիւղը հրաւիրած էր գիւղականներին ներկայ գտնվելու իւրեանց քահանայի ձեռնադրութեան օրը: Բայց նրանք բացէ ի բաց մերժել էին, պատասխանելով, որ քահանայի կարօտութիւն չունեն և դրաւոր խնդրած են առաջուց վիճակային ատենին և Վնահափառին չը ձեռնադրել դպր. Մօսէսին իւրեանց վրա քահանայ: Սրբազանը ուշադրութիւն չը դարձնելով այդ հանգամանքին փառաւոր հանդիսով ձեռնադրեց դպր. Մօսէսին, որ իր ժամանակին պիտի կուռ և անբաւականութեանց պատճառ դառնայ:

Այս տարի Լօռու գիւղերի մէջ բացվեցան մի քանի վարժապետներ, մէկը Գեառգեառ մէկ վարժապետով և չորսը Զալալ-օղլի դարձեալ մէկ մէկ վարժապետներով: Եւս Աստուած, որ այդ վարժապետները տեղաւորվեն և յառաջադիմութիւններ ունենան, թէ և ոմանք, որոնց պաշտօնն և պարգէն է այդպիսի հանգամանքներում քաջակերել ժողովրդականներին և բանալ դպրոցներ նրանց մէջ, զայրացած են և սպառնում են խախտել, որովհետեւ իւրեանց կամքը և խորհուրդը չեն հարցրած առաջուց...:

Ամսիս 4-ին, գիշերը Լօռու գաւառի Ղաթաթլիսա գիւղից չորս կտրիչներ, իմանալով որ առաջակաց խումբը, թուով եօթը հոգի, Երևակալ գաւառից գողացած քլում են դէպի Բօրչալու շատ եղևներ և կովեր, գնում են նըրանց ետեւից, երկուսին հրացանով սպանում են, որոնցից մէկի կուրծքի վրա եղել է շատ միղդաներ և խաչեր և թրի վրա տեմեակ, երկուսին ձերբակալ են անում և մնացած երեքը թողնելով բոլոր աւարն անհետանում են անտառների մէջ:

Մարկոս վարդանեանց

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Վրաց «Իրօբէ» լրագրում կարդումք, են որ առաջակ Տաո Յուլուկիճէին կալանաւորել են ՂԱՐՍՈՒՄ և բերում են Թիֆլիս:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՖԻՆԱՆՍ

«Indépendance Belge» լրագրում նոյեմբերի 11-ից կարդում ենք հետեւեալը: «Ահա հաւաստի մի բան որ ինձ պատմեցին նորերում: Այդ բանը պատահում է երկու աննատորներին մէջ: Դրանցից մէկը ձախակողմեան կենտրոնից է, միւսը (որի անունը ես երբեք չէի էլ ցանկանայ տալ) սահմանադրական է: Դուք արդէն կարող էք ձեզ երեւակայել խօսակցութեան առարկան «Ելմիածին, ասում է մէկը, դուք կամենում եք դարձնալ քուհարկը օրէնսդրականների, բռնապարտեանների և կղերականների հետ:—Ինչ ասեմք, պատասխանում է միւսը, դրա փոխարէն Դոսոնվիլին մեզ են շնորհում—Դոսոնվիլին, ինչ քայլ է. դա գրեթէ համար ու խուլ է:—Ինչ էլ որ լինի, պատասխանում է մեր սահմանադրականը Դոսոնվիլը մեր կողմը անցնելով մենք մի երրորդականով աւելանում ենք: Իսկ եթէ միանգամից ձեզ վրա աւելացնեն յանկարծ քառասուն ուրիշ նոր անդամներ, դուք բնաւ դժգոհ չէիք լինի,

այդ կը նշանակէ դուք կը լինէիք 168 անդամ, այսինքն առաւելութիւնը, մինչդեռ եթէ մի և նոյն համեմատութեամբ էլ աւելցնելու լինէիք սահմանադրականների թիւը, այսինքն մի երրորդականով, այն ժամանակ դրա թիւը կը հասնէր 4-ի, որ բազկացած է հետեւեալ անձինքներից պ. դուք Օդիֆրէ-Պակիէից, պ. Բօշէից, պ. Լամբերդ Սենտ-Կրուսից և պ. Դոսոնվիլից, որոնց յատկութեանը նայելով, յիշաւի, մի հոյակապ նուագութիւն է կազմում, բացի յատկութիւնը դրանց թւական նուագութիւնն էլ բաւական փոքր է: Լաւ կը լինի որ այս վերջինները վերջապէս ձանաչեն իրանց անդօրութիւնը: Ահա թէ ինչ տեղն են հասցրել դրանց սովորութիւնները:»

Վերէլ և և կէս ժամին համաշխարհական հանդէսը վերջնական կերպով փակվեցաւ: Օրվայ ընթացքում առանձին ոչնչ չը պատահեց: Այսօր սովորական կիրակիների նըման մի կիրակի է: Հասկանալի է որ բոլոր օտարականները արդէն կը սկսեն քաշվել: Այժմ բերնեւոր ու փաթեթներու հերթն է, և շատ շուտ էլ բաճիրի ու թիրի հերթը կը գայ, որովհետեւ բոլոր ինչ որ գրտնվում է «Champs-de-Mars» կոչված տեղը շուտով պէտք է քանդվի: Ասում են որ Փարիզ քաղաքի պալիլիօնը կտոր կտոր պէտք է քանդեն ու տեղափոխեն Տաո-դօ հրապարակի վրա: Դեռ յայտնի չէ թէ ինչ պէտք է անեն ապակիայ հիանալի գալլերէան: Ցաւալի կը լինի եթէ դրանք անհետանան: Հրատարակելու և ուշադրութեան արժանի բանն այն է, որ (ես այդ հաստատաւորութեանը գիտեմ) բոլոր այս հակները քանդելու միջոցին, այսքան հրաշալի ապրանքների մէջ ոչ մի նշանաւոր գործութիւն չէ պատահել: Մի քանի ձեւին գործութիւններ 40—60 ֆրանկ արժողութեան, մինչև անգամ չարժէ էլ յիշատակելու: Եւ ոչ նոյն իսկ խռովութիւն կաս շփոթութիւն է պատահել: Ֆրանսիական պօլիցիան ձիւղ կերպով է կատարել իր պարտականութիւնը:

ՄՇԱԿԻ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԳՐԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ

ՓԱՐԻԶ, 14/26 նոյեմբերի: «Temps» լրագրին հեռագրում են Հռօմից, որ գաւառներում շարունակվում է սօցիալիստների ագիտացիան: Օսիօֆիլեր (?) քաղաքային խորհրդի անդամ Անկատի սպանված է խանչալով:

ՍԱՐԱԳԱՍՍԱ, 14/26 նոյեմբերի: Հասարակական հանգստութիւնը խանգարող մի դաւադրութիւն յայտնվելու պատճառով շատ կալանաւորութիւններ են արած:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 15 նոյեմբերի: Լուր կայ, որ իբր թէ Մեզենցովի սպանողի հետքերը գտնված են:

ՎԻԵՆԱ, 14/26 նոյեմբերի: Հուսէյն-փաշայի տեղ Ալեանիայի նահանգապետը նշանակված է Բաթումի պաշտպան Արիֆ-փաշան:

ՍԵՓԱԿԱՆ ԹՂՍԱԿՑԻՑ

ՍՈՒՐԱՄՇ նոյեմբերի 14-ին Այսօր գիշերը, ժամը երկուսին Սուրամում և Բօրժօմում եղաւ սաստիկ երկրաշարժ: Բօրժօմում աւելի սաստիկ էր: Անկողնները մէջ պառկածները ընկան անկողններից: Երկրաշարժի հարուածները կրկնեցան երկու անգամ: առաջինը թող էր արեւելքից դէպի արեւմուտք ուղղութեամբ, երկրորդը աւելի սաստիկ և հակառակ ուղղութեամբ, որի ժամանակ լսել էր ստորերկրեայ սարսափելի թնդիւն: Տները ձաճում էին, թնդիւնը շարունակվեց մի քանի վայրկեաններ:

